Շողակն

Մակերես՝ 15.93կմ^2

Բնակչություն՝ 136

Գյուղ Ապարանի տարածաշրջանում : Մարզկենտրոնից գտնվում է 22 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Նարաշեն, Սաշլու, Սաչիլի, Սաչիլու, Սաչլու անվանումները: Նորաշեն է վերանվանվել 1946 թ-ին: Գյուղի տարածքում է գտնվում ս.Աստվածածին եկեղեցին: Գյուղը տեղադրված է Թեղենյաց լեռնաշղթայիի լանջերին, Քասաղ գետի ձախափնյա հովտում: Գտնվում է ծովի մակարդակից 2000 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են: 1831 թ-ին գյուղն ունեցել է 146, 1897 թ-ին՝ 605, 1939 թ-ին՝ 659, 1959 թ-ին՝ 256, 1979 թ-ին՝ 102, 1989 թ-ին՝ 145 հայ բնակիչ:Գյուղի բնակչության թիվը կազմում է 105 մարդ : Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 51%, կանայք՝ 49%: Բնակչության մեջ մինչաշխաատունակ տարիքի բնակիչները կազմում են 27%, աշխատունակները՝ 46%, հետաշխատունակները՝ 27%: Գյուղն ունի առկա 42 տնտեսություն: Ունի տարրական դպրոց, գրադարան, բուժկետ կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Սեփականաշնորհված հողերը զբաղեցնում են համայնքի ընդհանուր մակերեսի մոտ 13%: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր: Զբաղվում են դաշտավարությամբ, մշակում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Պահուստային հողերի մեջ մեծ է արոտավայրերի տեսակարար կշիռը՝ 414հա, ապա վարելահողերը՝ 136հա: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Արդյունաբերություն չունի: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: